

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2019թ. մայիսի 6-8-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի 21-րդ նիստին և Բնապահպանական տվյալների առաջին տարածաշրջանային համաժողովին,
- ✓ 2019թ. մայիսի 8-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած Կայուն զարգացման նպատակների վիճակագրության որակի բարելավման համար հետազոտությունների և ուսումնասիրությունների հզորացում Ծրագրի մեկնարկային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. մայիսի 13-17-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Նյուշատելում (Շվեյցարիա) կայացած «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային նստաշրջանին և «Վիճակագրություն և տվյալներ» ծրագրի շրջանակում Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կետրոնական Ասիայի երկրների մասնագետների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպված աշխատաժողովին,
- ✓ 2019թ. մայիսի 13-24-ը ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի հաշվի կազմումը» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. մայիսի 14-17-ը ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը մասնակցել են ք. Աթենքում (Հունաստան) կայացած «Փոքր տարածքների գնահատում» խորագրով ուսուցողական դասընթացին,

- ✓ 2019թ. մայիսի 21-22-ը ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հովհաննիսյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Դուշանբեում (Տաջիկստան) կայացած «Էներգետիկ վիճակագրությունը քաղաքականության վարման գործընթացում» խորագրով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2019թ. մայիսի 21-23-ը ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Բելգրադում (Սերբիա) կայացած «Տվյալների ինտեգրում. Վիճակագրական և աշխարհատարածական տվյալների ներուժի իրացումը» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. մայիսի 23-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ – Արևելք» (ENI SEIS II East) ծրագրի շրջանակում կազմակերպված Բեռնի կոնվենցիայի N8 (2012) բանաձևի ներքո հաշվետվողականության և պահպանվող տարածքների ցուցանիշների մշակման վերաբերյալ երրորդ աշխատաժողովին,
- ✓ 2019թ. մայիսի 27-29-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի օգնական Արմինե Քոսակյանը մասնակցել են ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի և գյուղատնտեսության կառուցվածքի հետազոտություն» խորագրով ուսուցողական այցին,
- ✓ 2019թ. մայիսի 28-29-ը ՀՀ ՎԿ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Նուր-Սուլթանում (Ղազախստան) կայացած 2017թ. միջազգային գլոբալ համադրումների ծրագրի Գլոբալ փուլի շրջանակում ՀՆԱ-ի բաղադրամասերի դեզագրեագիայի հետ կապված հարցերի քննարկումների նպատակով կազմակերպված ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների փորձագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,

- ✓ 2019թ. մայիսի 28-30 -ը ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած Սենդայի և ԿՁՆ-ի մոնիթորինգի շրջանակների ներքո գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառային տնտեսություններում աղետների պատճառած ուղղակի կորուստների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ տարածաշրջանային վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2019թ. հունիսի 3-5-ը ՀՀ ՎԿ որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը և տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի առաջին կարգի մասնագետ Վ. Մաճկալյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Տվյալներից դեպի վիճակագրություն. Պաշտոնական վիճակագրության արտադրում R-ի և Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM) միջոցով» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար ուսումնական դասընթացին,
- ✓ 2019թ. հունիսի 4-7-ը ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Վիճակագրական տվյալների բացահայտման վերահսկում» խորագրով ուսուցողական դասընթացին,
- ✓ 2019թ. հունիսի 5-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Լյուքսեմբուրգում (Լյուքսեմբուրգ) կայացած «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» տարածաշրջանային ծրագրի հիմնական ազգային համակարգողների առաջին հանդիպմանը,
- ✓ 2019թ. հունիսի 10-15-ը ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Ջակարտայում (Ինդոնեզիա) կայացած «Տնտեսական գլոբալիզացիայի վիճակագրություն և ավելացված արժեքի գլոբալ շղթայի քարտեզագրում» խորագրով տարածաշրջանային դասընթացին,

- ✓ 2019թ. հունիսի 11-12-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել է ք. Բիշքեկում (Ղրղզստանի Հանրապետություն) կայացած «Վիճակագրական վերլուծություն որակավորված աշխատուժի պահանջարկը և նախամասնագիտական կրթության համակարգի շրջանավարտները Ղրղզստանում» խորագրով տեխնիկական ուսուցողական սեմինարին,
- ✓ 2019թ. հունիսի 11-12-ը ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության վիճակագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Դեջնում (Կորեայի Հանրապետություն) կայացած «Ծերացման հարցեր և տարիքային բաշխումով վիճակագրական տվյալներ» խորագրով Թիչֆիլդի քաղաքային խմբի երկրորդ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. հունիսի 11-12-ը ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան և տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Պարենային անապահովության գնահատման սանդղակի վրա հիմնված չափավոր կամ սուր պարենային անապահովության տարածվածությունը բնակչության շրջանում՝ ԿՀՆ 2.1.2» թեմայով Կայուն զարգացման նպատակների 2.1-կետի վերաբերյալ տեխնիկական ուսուցողական աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2019թ. հունիսի 11-13-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Գենդերային տվյալների տարածում. Ազդեցիկ ուղերձների հաղորդումը՝ տվյալների օգտագործման խթանում» խորագրով տարածաշրջանային աշխատածողովին,
- ✓ 2019թ. հունիսի 17-19-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը, տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնայյանը և ՀՀ ՎՏՀ ծրագրի աշխատուժի ընտրանքային հետազոտության ղեկավար Լ. Մաքսուդյանը մասնակցել են ք. Երուսաղեմում (Իսրայել) կայացած «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում կազմակերպված աշխատուժի վիճակագրության թեմայով ուսումնական հանդիպմանը,
- ✓ 2019թ. հունիսի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած Ակտիվ ծերացման ինդեքսի վերաբերյալ շահառուների հանդիպմանը,

- ✓ 2019թ. հունիսի 18-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «ԱՊՀ վիճակագրական ենթակառուցվածքի կատարելագործում և ԱՊՀ վիճակագրական կոմիտեի վեբպորտալի մշակում» նախագծով ԱՊՀ մասնակից պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների մասնագետների համար ուսուցողական սեմինարին,
- ✓ 2019թ. հունիսի 19-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Հռոմում (Իտալիա) կայացած Ռեսուրսների հարցերով գործընկերների կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2019թ. հունիսի 24-25-ը ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Էներգաարդյունավետությունը արդյունաբերությունում և երկարաժամկետ էներգետիկ պլանավորում» խորագրով էներգետիկ քաղաքական ֆորումին,
- ✓ 2019թ. հունիսի 24-26-ը ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը, ավագ վիճակագիր Ա. Վարդանյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը մասնակցել են ք. Պրահայում (Չեխիա) կայացած «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում կազմակերպված Չեխիայի Հանրապետության զբոսաշրջության վիճակագրության ընդհանուր համակարգը ուսումնասիրելու նպատակով աշխատանքային այցին,
- ✓ 2019թ. հունիսի 24-28-ը ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետներ Ն. Բաբոյանը և Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Տնտեսական ակտիվության ցուցանիշի (կարճաժամկետ պարբերականության ցուցանիշներ)» թեմայով դասընթացին,

- ✓ 2019թ. հունիսի 26-27-ը ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության պետ Վ. Գևորգյանը, նույն վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Մելիքսեթյանը և տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Մարդահամարների և կացարանների հաշվառմանը նվիրված վիճակագրության վերաբերյալ Արևելյան գործընկերության փորձագիտական աշխատանքային խմբի 8-րդ հանդիպմանը,
- ✓ 2019թ. հունիսի 26-28-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 67-րդ հերթական լիակազմ նստաշրջանին, ինչպես նաև նստաշրջանի ներքո «Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը» խորագրով և «Ազգային վիճակագրական գրասենյակների նոր դերը՝ որպես վիճագրության և տվյալների գրասենյակներ» խորագրով սեմինարներին,
- ✓ 2019թ. հունիսի 27-28-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Միլանում (Իտալիա) կայացած Արևելյան գործընկերության 2017-2020թթ. Պլատֆորմ-4 ծրագրի շրջանակում կազմակերպած «Հմտությունների կանխատեսման և համապատասխանեցման թվայնացված փոխակերպումներ՝ բարելավված հնարավորություններ սպառողների համար» խորագրով յոթերորդ ուսուցողական աշխատաժողովին:

Առաքելություններ

- ✓ 2019թ. մայիսի 13-17-ը ՀՀ ՎԿ-ում էր Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյանի գյուղատնտեսության վիճակագրության գծով փորձագետ Գյորգի Լենգելը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Գյուղատնտեսության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. մայիսի 13-17-ը ՀՀ ՎԿ-ում էր Իտալիայի Գյուղատնտեսական հետազոտությունների և էկոնոմիկայի խորհրդի վիճակագրական գրասենյակի ղեկավար Իրաջ Նամդարիանը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Ընդհանուր մեթատվյալների և միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի վերաբերյալ վերապատրաստման կազմակերպում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. մայիսի 13-17-ը ՀՀ ՎԿ-ում էր Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետ Դեյվիդ Բարանը՝ «Կարողությունների զարգացման բարելավում գների վիճակագրության բնագավառում» նախագծի շրջանակում իրականացվելիք աշխատանքների նախագծման և պլանավորման նպատակով,
- ✓ 2019թ. մայիսի 20-24-ը ՀՀ ՎԿ-ում էին Համաշխարհային բանկի վիճակագրության գծով խորհրդատու Մայքլ Սթայները և Համաշխարհային բանկի փորձագետ Սիդնեյ Գուրլեյը՝ ԿԶՆ 1.4.2 «Հողի զբաղեցման ապահով իրավունք ունեցող չափահաս բնակչության ամբողջական թիվը՝ ըստ սեռի ու զբաղեցման իրավունքի տեսակի, իրավական փաստաթղթերով և ովքեր կարող են վկայել իրենց իրավունքի ապահով լինելու մասին» և 5.ա.1 «(ա) Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ սեփականության կամ ապահով իրավունքներ ունեցող մարդկանց համամասնությունը՝ ըստ սեռի, (բ) կանանց համամասնությունը գյուղատնտեսական նշանակության հողերի

- սեփականատերերի կամ իրավակիրների մեջ՝ ըստ հողի տիրապետման պայմանների» ցուցանիշների վերաբերյալ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու և Հողի նկատմամբ իրավունքի և հողատարածքների չափման վերաբերյալ փորձնական հնարավոր հետազոտության բյուջետային և կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով,
- ✓ 2019թ. մայիսի 27-29-ը ՀՀ ՎԿ-ում էր Թուրքմենստանի Վիճակագրական պետական կոմիտեի տնային տնտեսությունների հետազոտությունների վարչության պետ Շիրին Չոպանովան՝ Տնային տնտեսությունների հետազոտությունների գծով Հայաստանի փորձը ուսումնասիրելու նպատակով,
 - ✓ 2019թ. մայիսի 27-31-ը ՀՀ ՎԿ-ում էր Համաշխարհային բանկի փորձագետ Մորից Մեյերը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի ԹՎինինգ ծրագրի և այլ բաղադրիչների նախկինում գրանցած առաջընթացի քննարկման, մոնիթորինգի շրջանակի արդյունքային ցուցանիշների վերանայման և ECASTAT ծրագրի հետագա գործողությունների համար անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով,
 - ✓ 2019թ. մայիսի 30-ից հունիսի 5-ը ՀՀ ՎԿ-ում էր «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASTAT դրամաշնորհային ծրագրի ԹՎինինգ գործընկերության թիմի ղեկավար Իգոր Չերնիշևը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2019թ. հունիսի 10-14-ը ՀՀ ՎԿ-ում էին Համաշխարհային բանկի վիճակագրության գծով խորհրդատու Մայքլ Սթայները, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի վիճակագիր Նելի Գեորգիևան և փորձագետ Մարի Վանդերդոկը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում քննարկումներ իրականացնելու նպատակով,

- ✓ 2019թ. հունիսի 24-ից հուլիսի 4-ը ՀՀ ՎԿ-ում էր Ռուսաստանի Դաշնության տնտեսագիտության բարձրագույն դպրոցի պրոֆեսոր Ալեքսեյ Պոնոմարենկոն՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներ» և «Ծախսեր-թողարկում աղյուսակներ» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2019թ. մայիսի 1-31-ը ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պաշտոնական վիճակագրություն ԿՁՆ-ի համար» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2019թ. մայիսի 3-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը Հայաստանում. Ներդրումները հիմնավորող փաստարկներ» զեկույցի շնորհանդեսին,
- ✓ 2019թ. մայիսի 3-ին ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության թեմատիկ աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2019թ. մայիսի 13-ին ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած Համաշխարհային բանկի խմբի՝ տնտեսական շարժունակության վերաբերյալ «Հարավային Կովկասը շարժման մեջ» նոր գրքի շնորհանդեսին,
- ✓ 2019թ. մայիսի 23-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացվող «Ենթակառուցվածքային նորարարության քաղաքականության հեռանկարը» (Subregional Innovation Policy Outlook) ծրագրի վերաբերյալ կլոր սեղան-քննարկմանը,
- ✓ 2019թ. մայիսի 23-ին ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԵՄ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման Թայքս և Թվինինգ գործիքների վերաբերյալ աշխատաժողովին,

- ✓ 2019թ. մայիսի 24-ին ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք. Երևանում կայացած Սուպերհաշվիչ գործիքին (գործիք, որն ընձեռում է նորարարական հնարավորություններ ամենածավալում տվյալների հավաքագրման և դրանց մշակման համար, ինչը նպաստում է աշխատանքային գերժանրաբեռնվածության նվազեցմանը և տվյալների մշակման արդյունավետության բարձրացմանը) նվիրված տեղեկատվական հավաքին,
- ✓ 2019թ. մայիսի 29-ին ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստան – Թուրքիա տնտեսական հարաբերություններ. նո՛ր փուլ» ծրագրի մեկնարկի միջոցառմանը,
- ✓ 2019թ. մայիսի 30-ին ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ավտոմոբիլաշինությունը՝ որպես բարձր տեխնոլոգիական մեքենաշինության հիմնական սեկտոր» խորագրով կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2019թ. մայիսի 30-ին ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը և ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրոպական միության անդամ պետությունների դեսպանատան աշխատակիցների համար Արտաքին առևտրի վիճակագրության վերաբերյալ շնորհանդեսի ներկայացմանը,
- ✓ 2019թ. մայիսի 31-ին ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ ինտեգրացիոն կարողությունների ձևավորման և գնահատման նպատակով պետական և միջպետական «Ծախսեր-թողարկում» աղյուսակների օգտագործման գծով փորձագիտական խմբի 8-րդ նիստին,

- ✓ 2019թ. հունիսի 3-4-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ դասընթացին,
- ✓ 2019թ. հունիսի 4-ին ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ում ներդրումների ներգրավման գործընթացի պատասխանատու մարմիններին Հայաստանի զբոսաշրջության ոլորտում ներդրումային ուղեցույցի հանձնման վերաբերյալ քննարկմանը,
- ✓ 2019թ. հունիսի 4-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Մարտիկյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ENI SEIS II East ծրագրի շրջանակում Շրջակա միջավայրի վերաբերյալ զեկույցի մշակման նպատակով հանդիպմանը,
- ✓ 2019թ. հունիսի 5-ին ՀՀ ՎԿ «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտի վիճակագիր Ա. Պողոմոզովան մասնակցել է ք. Գյումրիում կայացած «Գյումրի – Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր (GCAP)՝ Կանաչ քաղաքի մարտահրավերների, տեսլականների, ռազմավարական նպատակների, միջնաժամկետ թիրախների և գործողությունների վերաբերյալ սեմինարին,
- ✓ 2019թ. հունիսի 6-ին ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնտեսական հեռանկարներ» խորագրով շնորհանդեսին,
- ✓ 2019թ. հունիսի 7-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Միջգերատեսչական համագործակցության խթանում և աջակցություն Երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի մշակմանը» ծրագրի Անչափահասների արդարադատության խորհրդի նիստին,

- ✓ 2019թ. հունիսի 13-15-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած «Միջգերատեսչական համագործակցության խթանում և աջակցություն Երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի մշակմանը» ծրագրի Անչափահասների արդարադատության խորհրդի արտագնա նիստին,
- ✓ 2019թ. հունիսի 17-18-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ոչ վարակիչ հիվանդությունների տնտեսական բեռի գնահատման մեթոդաբանության վերաբերյալ սեմինարին,
- ✓ 2019թ. հունիսի 18-ին ՀՀ ՎՊՀ անդամ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԱՊՀ տնտեսական խորհրդի 82-րդ նիստի օրակարգի հարցերի քննարկմանը,
- ✓ 2019թ. հունիսի 20-ին ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի թվային փոխարկման օրակարգ» ծրագրի շրջանակում «Թվային տնտեսության ռազմավարական գնահատում» գործընթացի համակարգման պատասխանատու անձանց համար սեմինարին,
 - ✓ 2019թ. հունիսի 20-22-ը ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի վիճակագիր Լ. Ասլանյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած «Տարածքային զարգացման ռազմավարության կառավարում» մասնագիտական զարգացման ծրագրի ներածական դասընթացին: